



Հավելված N 5

ՀՀ մշակույթի նախարարի

2012թ. N 5144-Վ հրամանի

«29» 06

**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) իրավաբանական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով և սույն կանոնադրությամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի (այսուհետ՝ Նախարարի) հրամաններով:

3. Վարչության կանոնադրությունը, կառուցվածքը հաստատում (փոփոխում) է Նախարարը:

4. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության խնդիրն են.

1) իր իրավասության շրջանակներում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման իրավական ապահովումը:

2) իր իրավասության շրջանակներում Նախարարության համաձայնեցմանը ներկայացված նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նախարարության ստորաբաժանումների կողմից ներկայացված կարծիքների ամփոփման, անհրաժեշտության

դեպքում քննարկումների կազմակերպման և նախարարության վերջնական կարծիքի ձևավորման գործընթացի կազմակերպումը.

3) իր իրավասության շրջանակներում վերահսկել Վարչության մասնակցության գործընթացը՝ Նախարարության և Աշխատակազմի անունից հայցերի և դիմումների, Նախարարության դեմ ներկայացվող հայցերի և դիմումների պատասխանների ձևավորման, ինչպես նաև ՀՀ դատարաններում Նախարարության ներկայացուցչության մասնակցության ապահովման աշխատանքներին.

4) ապահովել մշակույթի ոլորտի (այսուհետ՝ Ոլորտ) հայեցակարգերի, ռազմավարության, Ոլորտը կարգավորող իրավական ակտերի և Ոլորտի բնականոն գործունեությունն ապահովող չափորոշիչների, մեթոդական ցուցումների, պարզաբանումների, ուղեցույցերի ու այլ փաստաթղթերի, ինչպես նաև գործող փաստաթղթերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը և դրանց նախագծերի մշակման աշխատանքների կազմակերպումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Վարչությունն իր խնդիրներին համապատասխան իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) իր լիազորությունների շրջանակներում ապահովում է Նախարարության գործունեության իրավական կազմակերպումը,

2) ապահովում է Նախարարության աշխատակազմի ստորաբաժանումների տարբեր հարցերով իրավական օժանդակության և եզրակացությունների տրամադրումը,

3) իր լիազորությունների շրջանակներում Նախարարի ու Աշխատակազմի ղեկավարի հանձնարարությամբ մշակում է՝ անհատական իրավական ակտերի նախագծեր, տեղեկանքներ, իրավական եզրակացություններ, հիմնավորումներ և այլ փաստաթղթեր,

4) իրավական եզրակացություններ է տրամադրում Նախարարության անունից կնքվող պայմանագրերի վերաբերյալ,

5) ապահովում է Նախարարություն ներկայացված դիմումների, բողոքների, առաջարկությունների և այլ գրությունների վերաբերյալ իրավական եզրակացությունների տրամադրումը,